

Բ Ա Ն Ա Ս Է Ր

Հ Ա Ն Յ Յ Ս

ՀՆԱԽՕՍԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԿԱՆ

Ա ՏԱՐԻ 1899	Տարեկան՝ 20 ֆր․ 8 արլ․ : Վեցամսեայն՝ 10 ֆր․ = 4 արլ․ : Մէկ թիւը 6 ֆր․ :	ԳԻՐԳ Դ 1899
----------------	---	----------------

ՀՆԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐԱԳԻՒՏ ԲԵՒԵՌԱԳԻՐ ՄԸՆ ԱԼ

Ի Ղ Զ Ը Լ — Ղ Ա Լ Ա

- | | |
|-----------------------|--|
| [ՎԿԿ] ԵՄԿ ԿՅՅ ԵՄԿ ԵՄԿ | 1․ քու- ու-գու-ու-նի |
| ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ | 2․ (ԱՆ) խալ-դի-ի-նի-նի |
| ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ | 3․ ալ-սու-ու-ի-շի-նի |
| ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ | 4․ (դ) Մե-նու-ու-ա-նի |
| ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ | 5․ (դ) իշ-պու-ու-ի-նի- ե- ի |
| ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ | 6․ երկւ աշ թար-ա-ի-ե |
| ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ | 7․ երկւ աշ ալ-սու-ու-ի-նի |
| ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ | 8․ երկւ աշ երանաուէ Բի-ւ-ի-նա-ու-ե |
| ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ | 9․ ա-լու-սի պաուճրի Տու-ու-շ-պա-ա (ի՛) ; |
| ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ | 10․ (դ) Մե-նու-ու-ա-շա-լի |
| ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ | 11․ թէ-րու-րի (դ) թի-թի-ա-նի |
| ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ | 12․ իշ-թի-նի (դ) են-խու-ի |
| ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ | 13․ (ԱՆ) խալ-դի-ի-նի-նի |
| ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ | 14․ ու-շ-մա-ա-շի-ի-նի |
| ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ | 15․ ե-ու-րի-ի-ե |
| ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ | 16․ (դ) Մե-ի-նու-ու-ս-շ |
| ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ | 17․ (դ) իշ-պու-ու-ի-նի-խի-նի-շ |
| ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ | 18․ ի-նի (ԹԱՆ) պու-լ ու-սի |
| ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ | 19․ քու-ու-գու-ու-նի |
| ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ | 20․ (ԱՆ) խալ-դի-ի-նի-նի |
| ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ ԿԿ | 21․ ալ-սու-ու-ի-շի-նի |

«Ի՞նչ զրկ» լրագրի խմբագիրներէն Պր. Դ. Խաչկոնց երկու ամիս առաջ զրկած է մեզ վերի նորագրւտ բեւեռածեւ արձանագրութեան օրինակը, զոր ստացած է Խարբերդի ազգային վարժարանի ուսուցիչներէն Պր. Ռ. Զարդարեանէ, յատկապէս մեզ զրկուելու համար :

Արձանագրութիւնս գտած եւ օրինակած է նոյն վարժարանի բարձրագոյն դասարանի սաներէն Պր. Մարգար Յակոբեան, զպրոցական մեծ արձակուրդին իր դէպի Մեծկերտ (=Մազկեո՛ս) ըրած ճամբորդութեան միջոցին :

Արձանագրութեանս գտնուած վայրին մասին տեղագրական ծանօթութիւններ տուած է մեզ՝ դարձեալ նոյն վարժարանի ուսուցիչներէն Պր. Յակոբ Միմոնեան :

Թէեւ արձանագրութիւնը կը գտնուի այսօր Մեծկերտի արեւելեան կողմը չորս ու կէս ժամ հեռաւորութեամբ շինուած պզտիկ հայ գիւղի մը — որուն անունը չեն ծանուցած մեզ զժբաղդաբար — նորաչէն եկեղեցւոյն դրան ճակատը, բայց հոն տարուած է մտակայ Ղզրջ-ղայա (կարմիր բերդ) կոչուած աւերակ բերդէն, որուն իբր դուռ կը ծառայէ եղբր, ինչպէս հաւաստած են տեղացիք : Հաւանական է որ ճշմարտանման ըլլայ տեղացւոց տուած այս ծանօթութիւնը, քիչ մը փոփոխութեամբ սակայն, ենթադրելով որ տեղացւոց «դուռ» ըսածն իրական դուռ մը չըլլայ, այլ դրան ձեւով շինուած մասնաւոր խորշ մը, բեւեռածեւ արձանագրութիւնն անոր մէջ գետեղելու համար, ճիշտ ինչպէս ըրած են Մհերի-դրան եւ Աշոտայ-դրան (=Աշոտ-դարգա) արձանագրութեանց համար, որոնք իրական զոներ չեն բայց թէ ժայռի մէջ փորուած քառանկիւնի խորշեր :

Մեծկերտ Մամուրէթ-իւլ-Ազիլ նահանգին մէջ՝ Խարբերդի հիւսիսային կողմը 20 ժամ հեռաւորութեամբ գաւառակ մըն է : Հաւանաբար այս գաւառակն հին «Պաղնատուն»ն է, որ Չորրորդ Հայոց գաւառներէն մէկն էր եւ դրացի Բալահովտի : Իսկ Մեծկերտ աւանը Տաւրոսի ստորոտն է, անոր հարաւարեւելեան կողմը, երկու գետակներու մէջտեղ, որոնցմէ մէկը — Մեծուրեան գետակ (=Մուզուր-տու) — կը բղխի Մընձուր (=Մեղջան) լեռներէն, եւ Մեծկերտի արեւմտեան կողմէն կ'անցնի, միւսն ալ՝ — Միւս-Գայլ գետակ (=Լեզիխ-տու) — արեւելքէն կուգայ եւ Մեծկերտէն քիչ վար կը միանայ Մեծուրեանին : Այս երկու գետակներու մէջտեղ գտնուած երկիրը կոյս երկիր մըն է եւ հնութիւններով լեցուն : Մեծկերտ արդէն կարեւոր բերդ մը ունի, որ Ներսիսացի գիտնոց ուշադրութեան առարկայ եղած է արդէն :

Բալու՝ որուն բերդին վրայ գտնուած բեւեռածեւ արձանագրութիւնն արդէն ծանօթ է գիտնական աշխարհին, Յ ժամ միայն հեռու է Սեծկերտէն :

Յիւեալ Միւս-Գայլ գետակին եղբրքը կը գտնուի «Պաղին» անուանով գիւղ մը, զոր ուրիշ համանուն գիւղէ մը զանազանելու համար կը

կոչեն «Խոանայ-Պաղին» : Ասոր մօտ կան ջերմուկներ ու բերդ մր, ճիշտ գետակին վրայ : Բերդին վրայ կը տեսնուին աւերակներ ու անժատչելի տեղեր, այնպէս որ՝ առանց խուզարկութեան կարելի չէ եղած մինչեւ այսօր ստոյգ տեղեկութիւն մը քաղել իր մասին : Զերմուկներն՝ իբրեւ ուխտատեղիներ՝ շատ յաճախուած են շրջակայ ժողովրդէն : սակայն ո՛րևէ չէնք չէ մնացած հիմա ջերմուկներուն վրայ :

Այս Պաղինի ու Մեծկերտի մէջտեղ, այն է Մեծկերտի արեւելեան կողմը երեք ու կէս ժամ հեռաւորութեամբ, գիւղ մը եւ կիսաքանդ բերդ մը կայ, որ կը կոչուի «Ղըլըլ-ղալա» : գիւղն ալ բերդին անուանովը կը կոչուի : Ահա այս բերդէն տարուած է վերի արձանագրութիւնն յիշեալ հայ գիւղի եկեղեցւոյն համար, ինչպէս ըսինք, որ ժամաւ մեր այն հետի է այս տեղէն :

Կը ներկայացընենք հոս մեր այս արձանագրութեան թարգմանուած թիւնը, - որ հետեւեալն է .

.

- 1 • փորագրել տուաւ :
- 2 • Խաղդիացւոց
- 3 • մեծաց . —
- 4 • Մհնուաշի
- 5 • Իշպուհինիշեանի,
- 6 • արքային հզօրի,
- 7 • արքային մեծի,
- 8 • արքային երկրին Վանեցւոց,
- 9 • պետի քաղաքին Տոսպայ :
- 10 • Մհնուաշս ես
- 11 • հաստատեցի զԹիթիանի (իբր քուրմ),
- 12 • պատշաճելով այս հովուին :
- 13 • Խաղդիացւոց
- 14 • ողորմածաց
- 15 • սեառն . —
- 16 Մհնուաշ
- 17 • Իշպուհինեան
- 18 • այս արձանագրութիւնը
- 19 • փորագրել տուաւ :
- 20 • Խաղդիացւոց
- 21 • մեծաց :

Գիտութեան համար կարեւորն այս արձանագրութեան մէջ այն կէտն է որ առաջին անգամն ըլլալով կը ծանօթանանք Թիթիանի անուան . եւ՝

ինչպէս կը տեսնուի 11 ու 12 տողերէն, այս Թիթիանին՝ իբրեւ պատշաճաւոր անձը նոյն վայրի հովուութեան՝ ըսում կարգուած է Մենուշէն Ղզըլ-ղալայի մատրան կամ Թէ տաճարին :

Երկրորդ կարեւոր կէտն ալ այն է Թէ՝ արձանագրութիւնս, որ մէկ ու կէս մտար երկայնութիւն ունեցող քարի մը վրայ գծուած է, «բարձրաքանդակ» է. եւ ընդհանուր բեւեռածեւ արձանագրութեանց մէջ երկրորդն է միայն որ այսպէս «բարձրաքանդակ» գրուած է : Մենք նախ կ'սկսեմք խոսիլ այս բանին վրայ՝ գրեցինք Պր. Ռ. Ջարդարեանին, որ իսկոյն պատասխանեց հետեւեալ տողերով. — «Կը հաստատեմ Թէ բեւեռագիրը բարձրաքանդակ է եւ կատարելապէս ուղիղ է նախորդ նամակովս հաղորդած տեղեկութիւնս այս մասին » :

Հիմա կը մնայ գիտնալ Թէ արգեօք արձանագրութիւնս «փորագրել տուաւ» բառերով սկսած է, քանի որ անիմաստ է մի միայն «փորագրել տուաւ» ըսելն, առանց փորագրել տուողի անունն յիշելու. ուստի մենք կ'ենթադրենք Թէ մեր 1 Թուանշանով նշանակած տողէն առաջ առնուազն տող մը մաշած է եւ կամ ջնջուած անհետացած քանդիչ ձեռքերէ : Նոյն իսկ առաջին տողին սկզբի տառախումբը *բու*, զոր մենք անկիւնաւոր փակագծի մէջ առած ենք, կը պակսի բնագրին մէջ, որով կը հաստատուի մեր ենթադրութիւնը : Բաց աստի՝ Ծրդ տողի վերջընթեք տառը, Ծրդ տողի վերջին գաղափարանշանն եւ 10րդ տողի վերջին տառը պակասաւոր են, որ հաւանականաբար օրինակողին անուշագրութեան արդիւնքը չէ, այլ տաշուած ըլլալու են չարագործներու կողմէ :

Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ